

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր  
Ֆիզ.-մաթ. գիտ. թեկ. փիլ. գիտ. դոկտոր  
Ա. Ս. Ավետիսյան

«    »

2022

թ.



**ԿԱՐԾԻՔ**

**ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի՝ Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի՝ Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները թեմայով ատենախոսական աշխատանքը քննարկվել է Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի հոգեբանության ամբիոնում, և կարծիքը հաստատվել է 2022 թ.—ի մարտի 28-ին կայացած նիստում (արձանագրություն N5): Ներկա էին. Ա.Ս. Բերբերյանը՝ հոգ. ամբիոնի վարիչ, հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Չ.Ա. Մալոյանը՝ հ. գ. թ., ավագ դասախոս, Մուրադյան Ա.Ռ. հ. գ. թ., ավագ դասախոս, Ա.Ա. Սողոմոնյանը՝ ավագ դասախոս, Ի.Ա. Սարքիսյանը՝ ավագ դասախոս, Մկրտումյան Լ.Յու. հ. գ. թ., դոցենտ, Է.Բ. Գեղամյանը՝ հ. գ. թ. ավագ դասախոս:

Գլորալիզացիայի գործընթացների ժամանակակից դարաշրջանում օտար լեզվի կարգավիճակը, որպես ուսուցման լեզու, ենթարկվում է փոխակերպման: Հաշվի առնելով օտար լեզվի՝ որպես հաղորդակցության և փոխըմբռնման միջոց և դրա՝ համաշխարհային մասնագիտական հանրության շրջանում օրեցօր աճող դերը, առաջարկվող ժամանակակից մեթոդներն ու տեխնոլոգիաները միտված են դրա յուրացման արդյունավետ արդյունքների ձեռքբերմանը: Օտար լեզվի ուսումնառության մեթոդները, որպես այդպիսին, առանձին գոյություն չունեն. դրանք սերտորեն կապված են այլ գիտական ոլորտների հետ և հիմնված են դրանց օրինաչափությունների վրա: Խոսքը նախ և առաջ հոգեբանական գիտության մասին է: Հասարակության մեջ լեզվի գործառույթների բազմազանությունը և մտածողության ու մտավոր գործունեության հետ դրանց հարաբերությունների սերտ

բնույթը նշանակալից են դարձնում համապատասխան սոցիալական և հոգեբանական գիտությունների հետ լեզվի ուսուցման լեզվաբանական ասպեկտների փոխազդեցությունը:

Ներածությունում ներկայացված է ատենախոսության թեմայի արդիականությունը, խնդրի մշակվածության աստիճանը, առաջ է քաշված վարկածը, առկա են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, նշվում է ատենախոսության հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին՝ «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդիրը» գլխում, հեղինակը ներկայացնում է լեզվի ըմբռնման ոլորտում շարահյուսական գործընթացների հոգեբանական հետազոտությունների պատմական ակնարկը՝ ժամանակակից քերականական վերլուծության փորձարարական ուսումնասիրության տեսամեթոդական ասպեկտների համատեքստում: Հեղինակն ուսումնասիրում է հոգեբանական գրականության մեջ օտար լեզվի ուսումնասիրության գիտական հիմքերը՝ ներկայացնելով հոգեբանության պատմության առանցքային տեսությունները: Ուշադրությունը սևեռվում է հոգելեզվաբանական գրականությանը, ծավալուն է մասնավորապես՝ խոսքի մշակման հետ կապված հարցերը, լեզվական բնույթի մեխանիզմների հոգեբանական ասպեկտները՝ ընթերցանություն, գիր, գրավոր խոսք, լսողական հմտություններ, հիշողություն, բառամթերքի պահեստավորում, որոնում և պահպանում, լեզվի յուրացում, մտածողության և լեզվի փոխադարձ կապ, ներքին խոսքի դերը, օտար լեզվի տիրապետման առանձնահատկությունները: Ուսումնասիրվել են նաև օտար լեզվի ուսուցման տեսությունների սոցիալ-հոգեբանական յուրահատկությունները: Մասնավորապես, դիտարկվում են Լ.Ս.Վիգոտսկու, Ա.Ա.Լեոնտիևի աշխատանքները, որոնք մեծ դեր ունեն հոգելեզվաբանության մեջ օտար լեզվի ուսուցման գործընթացին առնչվող առանցքային տեսության զարգացման գործում: «Խոսքի ծագման հոգելեզվաբանական մոդելների նշանակությունը օտար լեզվի ուսումնառության գործընթացում» ենթագլխում, դիտարկվել են օտար լեզվի տեսության հարցերը՝ կախված խոսքային մոդելների բնույթից: Հեղինակն ուսումնասիրում է Չոմսկու և

Միլլերի փոխակերպման մոդելը: Պատմական ակնարկի և գիտական վերլուծության մեջ զերակշռում են լեզվի և խոսքի նկատառման լեզվաբանական կողմերը:

Երկրորդ՝ «Օտար լեզվի ուսումնառության ժամանակակից փորձարարական մեթոդները» գլխում, դիտարկվում են ժամանակակից փորձարարական մեթոդները, դրանց առավելություններն ու թերությունները օտար լեզվի ուսումնառության ընթացքում:

«Ժամանակակից մեթոդների կիրառման խորքային հիմքերը օտար լեզվի ուսումնասիրության տիրույթում» ենթագլխում, ուսումնասիրվում է լեզվի յուրացման գործընթացը՝ պայմանավորված լեզուն կրողի անհատականությամբ, նրա սոցիալական և էթնոմշակութային պատկանելությամբ, մայրենի և ուսումնասիրվող լեզուների միջև եղած նմանություններով և տարբերություններով: Հատուկ ուշադրություն է դարձվում մարդու



մտքի մասին Շլեգելի, Վ.Հումբոլդտի տեսություններին, Չոմսկու համընդհանուր քերականական մոդելին, գիտակցական կամ, ընդհակառակը, անգիտակցական ուսուցման գործընթացի մասին տեսություններին և այլն:

«Ներքին խոսքի մասին մեր տեսակետը» ենթագլխում ներկայացված են ներքին խոսքի մասին հիմնական տեսությունները, մասնավորապես, Լ.Ս.Վիգոտսկու, Ա.Ա. Լեոնտևի տեսությունները: Հեղինակը հիմնվում է Վիգոտսկու այն թեզի վրա, որ «Ներքին խոսքը բարձրագույն մտքի արդյունք է»: Այնքան էլ հիմնավորված չէ հեղինակի տեսակետը, որը, նախքան կատարած փորձարարական հետազոտությունը, պնդում է, թե «Կատարելով որոշ փորձեր, ներկայացնում ենք սեփական տեսակետը ներքին խոսքի մասին և որպես ներքին խոսքի չափման միավոր՝ առաջարկում ոչ թե բերանի շարժման մկանային համակարգը, այլ աչքերի շարժն ընթերցանության ժամանակ»: Հեղինակի հայտարարությունը հնչում է ոչ թե որպես ենթադրություն, այլ վստահ հայտարարություն:

Երրորդ՝ «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդրի փորձարարական հետազոտությունները» գլխում, դիտարկվում է անգլերեն լեզվի դասավանդման և ուսանողներին՝ ըստ նրանց հոգեբանական բնութագրերի դասավանդման ընտրանին առավել տարածված օտար լեզվի ասպեկտում՝ կախված ուսանողների մտավոր և ֆիզիկական առանձնահատկություններից, ներկայացված են ուսուցչամետ և ուսանողամետ, հաղորդակցական (CLT-ուսուցում/դասավանդում), 'բրեյնսթորմինգ' առաջադրանքներ, որոնք ընկած են օտար լեզվի ուսուցման ամբողջական մոտեցումների վրա հիմնված խնդրի լուծման գործառնությունների հիմքում:

Հեղինակը ներկայացնում է յտղական ուսուցման ոճը, որը կենտրոնանում է հիմնականում յտղական խթանների վրա (խոսակցական լեզու, երաժշտություն, ծայներ և տեսողական ուսուցման ոճ), կինեսթետիկ ուսուցման ոճ, երբ շարժումն օգտագործվում է որպես ուսուցման ոճ: Ներկայացված է ուսուցման ինդուկտիվ ոճը, ինչպես նաև այլ մեթոդներ, որոնց արդյունքները հաստատում են, որ դրանցից յուրաքանչյուրի ընտրությունը կախված է կոնկրետ յարանից, քանի որ ընտրված ուսուցման ոճը պետք է համապատասխանի յարանի ընդհանուր պահանջներին և նպատակներին, ուսանողների հոգեբանական առանձնահատկություններին:

Երրորդ՝ «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդրի փորձարարական հետազոտությունները» գլխում, իրականացվել են հետազոտություններ՝ հիմնվելով տեսական մասում ուսումնասիրված օտար լեզվի ուսուցման մեթոդների վերլուծության վրա:

Հեղինակն առանձնացնում է օտար լեզվում դրդատճառի, դիրքորոշման ու լեզվական տազնապի բաղադրիչները: Օգտագործվել է AMTB (Attitude/Motivation Test Battery) հարցաշարը, որը ստուգում է հինգ մոտիվացիոն փոփոխականներ օտար լեզվի իմացության հետ դրանց կապի համար: Այլ հարցաթերթեր և ս մշակվել են վերոնշյալ երեք բաղադրիչները չափելու համար, նույն AMTB-ի ամփոփիչ համառոտ տարբերակը հայկական և քուվեյթյան յարանների համար, մշակվել է AIEMT-ի (Intrinsic/Extrinsic Motivation Academic Test-ներքին/արտաքին դրդապատճառի չափման թեստ)



դրդապատճառի տեսակը կամ բացակայությունը որոշելու նպատակով, և AAMT (լեզվական տազնապի չափման թեստ) հայկական ու քուվեյթյան լսարաններում՝ լեզվական տազնապի չափման նպատակով: Այս հարցաթերթերին գուգահեռ՝ կիրառվել է դրդապատճառային-դրական ուսուցման առաջադրանքների շարք՝ լեզվական տազնապը նվազեցնելու նպատակով:

Ձևակերպված են չափման մեթոդներ՝ ինքնահաշվետվություններ, ամսագրեր, հարցազրույցներ, օրագրեր: Հաշվի առնելով արաբական մշակույթի առանձնահատկությունները՝ ընտրվել է քննադատական և ստեղծագործական ներուժն ու հմտությունները բացահայտող ու գնահատող ամսագրային և ակնարկային տարբերակները:

Կիրառվել է նաև մշակույթների բաղդատման մեթոդը օտար լեզվի ուսուցման, ուսումնական ինքնուրույնության, սոցիալական միջավայրի համատեքստում, այն սոցիալական միջավայրի, որտեղ ուսանողն ապրում և սովորում է, ձևավորվում են նրա փոխհարաբերությունները:

Հեղինակը լեզվի ուսումնառության գործընթացում առաջարկում է օգտագործել այսպես կոչված Քննադատական մտածողության հիմնադրամի առաջադրած «Հոգեբանական ինն մեխանիզմները»: Հեղինակն այստեղ չի հիմնավորում ոչ միայն արդյունավետ կրթական գործընթացի ճիշտ իրականացման և ապահովման, այլ նաև «մտածող» տեսակ կերտելու վերաբերյալ իր կարծիքը:

#### ***Առկա դիտողություններն ու առաջարկությունները հետևյալն են.***

1. Ատենախոսության նպատակում մատնանշված հոգեյեզվաբանական մոդելի ստեղծման ցանկությունը, որն ավելի շուտ կպայնավորի օտար լեզվի ուսումնառության գործընթացը սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների լուծմամբ, քան մետաճանաչողությամբ, բաց կամ թերի է թողնում մետաճանաչողության հարցը: Եթե հեղինակն առաջ է քաշում մոդել, որն ավելի արդյունավետ է կառուցված, քան մետաճանաչողության վրա կառուցված մոդելը, ապա անհրաժեշտ է բացահայտել մետաճանաչողության էությունը թե՛ տեսական, թե՛ դրա գործնական-փորձարարական կիրառման առումով, և համեմատել երկու մոդել՝ արդյունավետությունը բացահայտելու համար, ինչը կվկայեր աշխատանքի նպատակի ավելի համոզիչ իրագործման մասին:

2. Ատենախոսական հետազոտության տեսական մասում հանգամանալից շարադրվում է ռուս հոգեբաններ՝ այդ թվում Ա.Ա. Լեոնտևի, Լ.Ս. Վիգոտսկու գիտական տեսակետները, երրորդ զլխում ներկայացված փորձարարական աշխատանքի բովանդակությունը կառուցված է արտասահմանյան հեղինակների տեսությունների վրա, ինչի արդյունքում տրամաբանական կապը մեթոդաբանական բազայի հետ որոշակիորեն խզվում է:

3. Երրորդ՝ «Օտար լեզվի ուսումնառության հոգեբանական հիմնախնդրի փորձարարական հետազոտությունները» զլխում, ատենախոսն ուսումնասիրում է այլ հեղինակների հետազոտությունները և քննարկում նրանց իսկ արդյունքները, ինչը նվազեցնում է

ինքնուրույնության մակարդակն ու սեփական ներդրման աստիճանը հենց հեղինակի կողմից առաջարկվող խնդրի լուծման հարցում:

4. Երրորդ՝ «Աֆֆեկտիվ գործոնների չափման նոր եղանակների ներմուծումն ու դրանց առանձնահատկությունները» ենթագլխում հեղինակը հիմնավորում է դիրքորոշման չափման մեթոդները, այդ թվում՝ ինքնահաշվետվություններ, ամսագրեր, հարցազրույցներ, օրագրեր: Բացառվել է անուղղակի-միջնորդավորված հաշվետվության կիրառումը, սոցիոմետրիկ հաշվետվության օգտագործումը՝ հաշվի առնելով զգայուն արաբական մշակույթի որոշ առանձնահատկություններ: Այնուամենայնիվ հիմնավորված չեն կոնկրետ գիտական աղբյուրների վրա հիմնված այն չափանիշները և յուրահատկությունները, որոնք ցույց կտային արաբական մշակույթի առանձնահատկությունները:

5. Հեղինակի կողմից օգտագործված մեթոդները հայերեն ևն թարգմանվել հայ հարցվողների համար, բայց առանց աղապտացիայի և համապատասխան փորձարկման, այդ մեթոդների արդյունքները չեն կարող վստահելի համարվել:

6. Ունեի ուսումնասիրության և սահմանման ժամանակ առանձնացվել և առաջարկվել են անհատականությանը միտված լսողական, խոսակցական, տեսողական, երաժշտական-լսողական, դերակատարային, սպեկուլյատիվ, իրատեսական, դեղուկտիվ-ինդուկտիվ կրթամեթոդական, հարուստ, հագեցած շարք, գլուխկոտրուկ խաղային շարք: Տվյալ ոճերը ներկայացված չեն կոնկրետ հեղինակի հատուկ դասակարգմամբ, Մեյիքյանի կողմից ներկայացված դասակարգումը արտացոլում է չհիմնավորված առանձին հատվածների էկլեկտիկական հավաքածու, Այդ ոճերի չի կարելի համարել բազային օտար լեզվի դասավանդման տեխնոլոգիաները որոշելու համար:

7. Աշխատանքի ամբողջ տեքստում շեշտադրվող նպատակում և բովանդակության մեջ պնդվող թեզում այն մասին, թե օտար լեզվի արդյունավետ ուսուցման գործընթացը պայմանավորված է սոցիալ-հոգեբանական գործոններով, լիարժեք իրագործում չի ստանում, չեն նկատառվել անձնային հատկանիշներ, անհատական-հոգեբանական առանձնահատկություններ, գենդերային ցուցիչներ, որոնք որոնք կարևոր է հաշվի առնել ապագա մասնագետների լեզվաբանական իրավասության ձևավորման և զարգացման համար:

Պաշտպանության ժամանակ որոշ դրույթների հիմնավորումն ու շտկումը և լրացուցիչ մեկնաբանությունները կընդգծեն կատարված ուսումնասիրության գիտագործնական արժեքը: Սեղմագիրը համարժեք կերպով արտացոլում է ատենախոսական աշխատանքի բովանդակությունը:



**Եզրակացություն**

Լիլիթ Գուրգենի Մելիքյանի՝ Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները թեմայով ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման մասին ատենախոսության հաջող պաշտպանության դեպքում, այն համապատասխանում է Բարձրագույն որակավորման կոմիտեի պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի կոչման:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի  
հոգեբանության ամբիոնի վարիչ,  
հոգ. գիտ. դոկտոր

Ա. Ա. Բերբերյան

Նիստի քարտուղար

Գ. Մարտիրոսյան

Ամբիոնի վարիչ Ա. Ա. Բերբերյանի ստորագրությունը հաստատում եմ

Հայ - Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական քարտուղար,  
բանասիրական գիտ. թեկն.

Ռ. Ա. Կասաբարովա

